


Սմբատ Բիւրատ  
Խմբագրութիւն «Փիւնիկ»,  
Աղեփասնորիա



S. Burat  
Rédaction «PUNIG»  
Alexandrie

ԵԳԻՊՏՈՍ

ՏԱՐԵԿԱՆ... 45  
ՎԵՑԱՄՍԵԱՅ 25


ԲԱԺՆԵԳԻՆԸ  
ԿԱՆՆԻԿ Է



# ՓԻՒՆԻԿ

ԱՐՏԱՍԱՀԱՄԱՆ

ՏԱՐԵԿԱՆ... 15  
ՎԵՑԱՄՍԵԱՅ 8  
ԿՈՎԿԱՍ  
ՏԱՐԵԿԱՆ ԲԱՂ. 6



ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

## ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ


ՉԵՌՔԷ ԿԸ ԾԱԽՈՒԻ ՀԱՏԸ ՄԷԿ ՂՐՈՒՇ ՈՂՋ

Բ. ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ 21 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1901

ԹԻԻ 19

### ԳՐԱԽՕՍՍԿԱՆ



#### ԿԵԱՆՔԻ ՀԱՃՈՅՔՆԵՐԸ (1)

Գիրք մըն է ասիկա որուն յառաջաբանը՝ Սրբ ձօն Լուսոփ ասիլէ մօտաւորապէս սասն եւ հինգ սարիներ առաջ գրած է։ Ու «Կեանքի Հանոյքներ» ու այս սասն եւ հինգ սարիներու չափ հնաքիւնը չ'արգիլեք զիս, կարծեմ, զայն «գրախօսական»ի մը նիւթ ընելու։

Գիրքը՝ իր գոյութեան այս պզտիկ ժամանակամիջոցին մէջ հարիւրէն ասիլի անգամներ սպագրութեան յանձնուած է արդէն յԱնգղիա. ու Գերման մեծ հրատարակիչը՝ Պէրնարս Թօֆնից չ'է մոռցած իր ընտրած հեղինակու-

թիւններուն ցանկին մէջ անցընելու եւ Սրբ ձօն Լուսոփի «Կեանքի Հանոյքներ» ու այլ երկասիրութիւնները. Թօֆնից սասնէ ասիլի անգամներ արտասպելով զանոնք ցրուած է՝ Անգղիայէն դուրս՝ Եւրոպայի ամեն կողմերը։ Նպատակս, սակայն, ընտրած նիւթիս վրայ խօսելէ միայն։

ձօն Լուսոփի «Կեանքի Հանոյքներ» մին է այն գրքերէն, որոնց վրայէն սարիներու քառալումը՝ սարբերութիւն չ'ընեն, որովհետեւ հեղինակը չ'է եղած մին այն դժբաղդ հեղինակներէն որուն մարդ կարենայ ըսել. — «Վայրկեան մ'անգամ չ'այիսի զոհեմ եւ գիրքդ կարգալու համար»։ Ընդհակառակն գրքէ ամեն մարդ՝ գէթ Անգղիոյ մէջ՝ կարդացած է զայն. 6րդ. edition ը ամենայնէն աղփասին անգամ կարելի ըրած է զայն ունենալու։ Ու ընտիր հեղինակներու ընտիր երկերն են միայն որ այս «կէս ժրանկնոց սպագրութիւն»ին կ'արժանանան։

(1) «The Pleasures of Life», By Sir John Lubbock, Bart.; London.

Պարունէք, Խորհրդարանի անդամ եւ քաջ Օրէնագէտ մ'է Սրբ ճօն Լուսօփ. Լոնսօնի Համալսարանին եւ Գործաւորաց Գօլէնի ներկայացուցիչն է Խորհրդարանի մէջ. ունի նաեւ շատ մը կարեւոր պաշտօններ: Դրամասէրի գաւազ, ծնած է 'ի Լոնսօն 1834ին: Մեծ ընթերցող մ'է նա, ու, միեւնոյն ժամանակ լաւ բնագէտ մը:

Սրբ ճօն Լուսօփ երկու մասի բաժնած է «Կեանքի Հանոյները» եւ մէկն ի մաս զայս զայս գլուխներու վերածած: Առաջին մասը որ քաղցր գլուխներէ կը բաղկանայ, իր այլ եւ այլ առթիւ տարբեր Գօլէններու ու Համալսարաններու մէջ խօսած նաւերն ու աստեալաբանութիւններն են:

Երկրորդ մասը որ քաղցր գլուխներէ կը բաղկանայ, մասնաւորապէս պատրաստած գիրք մըն է:

Առաջին հասորիկին նիւթ ընտրած է Երջանկութիւնը, Պարտաւանաչութիւնը, Գրեւոր եւ զանոնք ընտրել գիտնալը, Բարեկամներ ունենալը, Ժամանակին արժէքը հանչնալը, համբողջութեան ու Հայրենիքի հանոյները, Գիտութիւնն ու Դաստիարակութիւնը:

Երկրորդին մէջ խօսած է Փառասիրութեան, Հարսութեան, Առողջութեան, Սիրոյ, Գեղարուեստի. Բանաստեղծութեան, Երաժշտութեան, Բնութեան Գեղեցկութիւններուն, Կեանքի, Աւելանութեան ու Հանգստի, Յառաչողիքի ու Մահուան վրայ: Աստիճաններն ալ մարդու՝ երջանկութիւն, կեանքին՝ հանոյ պատճառող բաներ, եղած են աստղար «Կեանքի Հանոյներ»ուն, որուն ամեն գրասէր անոր իր յասուկ տեղը պիտի տայ իր մասնագրասին մէջ:

Լուսօփի այս երկը *réaliste*ի գաղափարներ, *idéaliste*ի ձգտումներ ունեցող մէկու մը կրնայ մի քիչ տարօրինակ, *banale* բուիլ սկիզբը, նկատելով որ կեանքը իրականութեան մէջ բոլորովին

տարբեր է ու զայն նկարագրողը՝ Դրամասէր մը. կ'ընդունիմ ասիկա. բայց երբ ուշ ուշ կը կարգանք իրականչիր հաստատ ու կը մտածենք թէ աշխարհի վրայ ամեն մարդ իրեն յասուկ ցաւ մը, վիշտ մ'ունի, մեր այս դիտարկեան իրաւունքը ինքնին կը նուազի արդէն:

Ասկէ զայս շարունակ խօսողը Լուսօփ ինքը չ'է, այլ նա իր ըսածներուն վկայ կը բերէ յանախ Սոկրատ, Էրիկստէս, Ուրէլիոս, Պլատոն, Սենեկա, Շէլլեր, Միլտոն, Ռուսկին, Կէօթէ, Պայրըն, Թէնիսըն եւայլն: Իրաւ է թէ՛ *citation*ներու շատ մեծ տեղ տրուած է «Կեանքի Հանոյներ»ուն մէջ, բայց անոնք պատիւ կը բերեն հեղինակին եւ կը հաստատեն թէ մեծ ընթերցող մը եղած է նա:

ճօն Լուսօփ այնքան գիտակցողէն գրած է իր երկը, որ անոր ամբողջութեան վրայ կ'սխալմանայ մարդ: Թէ՛ հարուստը, թէ՛ աղքատը՝ հաւասարապէս՝ պիտի գտնեն իրենց վշտերուն սփոփանքը... Աղքատը փորձով պիտի տեսնէ որ կարծածին չափ բոտառ չ'է ինք, եւ ոչ ալ հարուստը աղքատէն տարբեր՝ երջանկի էակ մը: Ամեն ոք երջանկի է, կ'ըսէ նա, եթէ ուզէ ըլլալ. իսկ կեանքը՝ հանոյք, եթէ, սակայն, ուզուի վայելել: Կրնան շատ ասոր հակառակը պնդել: Բայց ասիկա կը հրատարակեմ, կը յատելու Սրբ ճօն Լուսօփ իր յառաջաբանին մէջ, յուսալով որ՝ այն խորհուրդները ու վկայութիւնները զորս կարդալով մեծ սփոփանք գտած եմ կեանքի դառնութիւններու հանդէպ, կրնան թեքու օգտակար ըլլալ եւ ուրիշներու:

«Կեանքի Հանոյներ»ը գիրք մըն է վերջապէս, ուր ամեն մարդ կրնայ կարգալ կեանքը, մարդու գոյութեան պատճառը: Մ. Մանուրեան իր «Մամուլ»ին մէջ (1899ին վերջերը կարծեմ)

այս գրիկն բարգմանութիւնը տեսնելու փափաք կը յայցնէր. յուսանք թէ կ'ի-  
րագործուի, ինչ որ մեր ալ բաղ-  
ձանքն է:

ՎԱՀԷ

### ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Գահիրէ 19 Սեպտ. 1901

... ՏԷՐ ԽՄԲԱԳԻՐ

Գահիրէցիներն ալ վարակուեցան վարժարանական հարցի տարափոխիկ ախտէն ու ա'լ յաւիտենական յանկեր-  
զի մը պէս միշտ պիտի հնչէ մեր ա-  
կանջին. ո'ւր երթանք, հոգաբարձուն  
ու վարժուհին են խօսակցութեան նիւ-  
թը մեր ազգային ճիւղներուն:

Օրը օրին «Փիւնիկ» կը հետեւին, կը հետաքրքրուին, ձեն ու բլանը ու սուսնասիրելու յարձակումին՝ որուն յատակագիծն ընդօրինակած են Աղեք-  
սանդրիայէն, ու մօտալուտ կերեւի վճռական ժամը: Ծնողներ կան որոնք շուարած ինչ ընելին իրենք ալ չեն գիտեր խեղճէ՛րը. մինչդեռ Գալստեան վարժարանը իր նոր շրջանի հոյակապ դռները կը բանայ սերունդներու ապա-  
գային առջեւ. լոյսի ու յոյսի տաճա-  
րը... մտածուած է այս ձևը. վար-  
ժապետներէն ոմանք լիուլի յոյսեր կը ներշնչեն ծնողներուն, վարժարանի ա'լ անհրաժեշտ բարեկարգութեան հա-  
մար. սա աղւորիկ խոստովանութիւնը, որ զարհուրանքով մը ետ նայել կու-  
տայ մեզ դեռ երեկուայ անցեալին, ամենափայլուն մէկ արտայայտութիւնն է անխղճութեան հետ դաշնակցող ան-  
մտութեան մը. բայց չի կարծէք թէ՛ այդ վարժապետները միայն ծնողները կը խաբեն տարուան մը միջոց ալ շա-  
հելու համար, քանի մը կ'ըրիկ ևս մէկ

կողմ դնելու, ու այս՝ անորակելի ճար-  
պիկութեամբ մը.

Քիչ մ'ալ մեր վարժուհիին խըն-  
դիրը նայինք. հոգաբարձուն արդէն սա մեր ծանօթ «Երիւզեղի հոգաբար-  
ձուն» է, որ անցեալները «անբարոյա-  
կանութեան սահմաններ»ուն մէջ երե-  
ցաւ ու հիմա դարձեալ ինքն է մէկը այն դէմքերէն, որ կարմրիլ չ'են սով-  
րած ու ապագայ հարսնցուի մը գո-  
յութիւնն երաշխաւորելու համար է որ կուգան քթերնին խօթել արժանա-  
ւոր վարժուհի մը ամսականին մէջ՝ իբր հոգաբարձու, քիչ մ'աւելի ար-  
տայայտուելու համար. որովհետեւ, ինչ-  
պէս յայտնած էինք, մեր շիֆ հոգա-  
բարձուն որոշած է եղեր մինչև վերջ շարունակելու իր պաշտօնը, արհա-  
մարհած ըլլալու համար բոլոր այն անպատկառ յարձակումները, որ եղած են իրեն դէմ, ու որպէսզի մէկ ա-  
պացոյցը տուած ըլլայ այս աղւոր ու  
ընչումին, յարմար դատած է քիչ մը կրծել պոչէն՝ մեր վարժուհի ամսա-  
կանին. բայց չի կոտորին ակռաները՝  
... հետաքրքիր է պատմութիւնը:

Քանի մը շաբաթ է ի վեր ճողո-  
վուրդին մէջ կը յուզուէր նաև երկու տարիներէ ի վեր Ազգ. Առաջնորդա-  
րանի հսկողութեան տակ, փոշիներուն մէջ փտելու դատապարտուող Քլիւպի գոյքերուն խնդիրը, զոր յարոյց Լսա-  
րան-Ընթերցատան ընկերութիւնը, իր առ Պատկ. Քաղ. Ժողովն ըրած մէկ գրաւոր դիմումովը, ուր խնդրած էին ուշադրութեան առնել համանման ըն-  
կերութեան մը գոյութեան անխուսա-  
փելիութիւնը, և հետևաբար, այդ գոյքերուն յանձնուիլը՝ արդէն գոյու-  
թիւն ունեցող Լսարան-Ընթերցատան մը՝ որուն նպատակն է այն՝ ինչ որ էր նախկին ընթերցասիրացիներ՝ ու անշուշտ այս բնական պահանջին կ'սպասուէր որ նպաստաւոր գոհացում մը տրուէր, բայց վիժեց, մերժուեցաւ... Որովհե-

տև վիժածներ սպրդեցան գործին մէջ: 25. շատ վեր-վեր մի՛ իյնաք, Աղէք-սանդրիացիներ՝, Գահիրէ՛ն ալ ունի իր Լեոն Մկրտիչեանը, ու «Փիւնիկ»ի ընթերցողները պիտի ծանօթանան բոլոր այս իրողութեանց. առ այժմ այսքանով բաւականանք:

Ինչպէս ծանուցուած էր արդէն «Փիւնիկ»ի միջոցաւ, անցեալ Կիրակի Սեպտ. 8ին Տեղույս Ս. Աստուածածին Եկեղեցին հոգեհանգիստը կատարեց հայրենիքի ընդհանուր նահատակաց: Երկսեռ խուռն բազմութեւ մը լեցուած էր Եկեղեցին:

Արժ. Տեր Եղնիկ Հայրը քանի մը խօսքերով բացատրեց այս նուիրական օրուան նշանակութիւնը, և պարտականութիւնը ապրող Հայուն՝ դէպ ի եր նահատակները: Շատ փառաւոր անցաւ հոգեհանգստի արարողութիւնը, լուսավառութիւններ եղան, մոմեր ցրուեցան ժողովուրդին մէջ. շատեր զգածուած կուլային:

Եկեղեցիին դուռը պնակ դրուած էր երեք թշուառ բանտարկեալներու համար, գոհացուցիչ արդիւնք մը գոյացաւ:

Երեկոյեան ժամը 8.30 ին սկսաւ հանդէսը՝ Եգիպտ. Թատրոնին մէջ. երգեցիկ խումբը՝ առաջնորդութեամբ մեր ամենուս համակրելին ու տաղանդաւոր ձայնագէտ Պ. Խաչիկ Սարգիսեանի և մասնակցութեամբ Պ. Գուռթիի Նուագախմբին՝ երգեց «Բաւթ որոսան»ը, ու հանդէսը բացաւ Պ. Սարգիս Երամեան: Ատենախօսեցին Տիար Շ. Շիշմանեան, Ա. Զարեհեան, Ա. Մալումեան (փոխանորդաբար հայասէր Պ. Միւնիյէի որ անձնական տկարութեան պատճառաւ չի կրցաւ անձամբ կարդալ իր պատրաստած գեղեցիկ բանախօսութիւնը) և Ս. Թէրզիեան:

Արտասանեցին երկու փոքրիկ հրեշտակներ. Օր. Հայկուհի Միսաքեան՝ «Ռոզը առ Եւրոպան». Օր. Նուարդ Զատէեան «Ազատն Աստուած»՝ կատարելով իրենց դերը ա՛յնքան լուրջ ու տպաւորիչ կերպով՝ հակառակ իրենց տարիքին. տպաւորութիւնը շատ վարդազոյն եղաւ:

Ողբերգութիւն մէկ Արար.

«Փրկութիւն Մայր Հայաստանին» շատ յաջող անցաւ և յուզեց հանդիսականները.


Թատրոնը զարգարուած էր Հայկական Մայր Դրօշով մը որ կը ծածանէր տիրականապէս. դրօշներ «Յեղափոխութիւն»ի, «Ազատութիւն»ի, «Քրօ Արմէնիա»ի եւն:

Ամեն դասակարգէ խառն բազմութիւն մը ասնելու եկած էր յիշատակը՝ իր խնկելի նահատակաց, բաց ՚ի վարժապետ դասէն, որոնք իրենց բացակայութեամբ կը փայլէին:

Չ՛մոռնամ ըսելու թէ՛ նախապէս որոշման մը համաձայն՝ Պատ. Յանձնախումբը ծաղկեփունջ մը պատրաստած էր որբերուն նուիրելու համար, ժողովուրդի կողմէ հանգանակութիւն մ՛եղաւ աւելի արդիւնաւորած ըլլալու համար այս գեղեցիկ գաղափարը. յետոյ Պ. Նասիպ Ուռկանեան անձամբ գնել առաջարկեց ծաղկեփունջը 2 անգլ. ոսկի և ստացաւ. այսպէս, մեր անուշիկ որբուկներուն 4 ոսկի հասոյթ մը գոյացաւ:


Պարտ անձին կը համարիմ ըսել թէ՛ Պատ. Կարգադիր Մասնախումբը ո՛չ մի ջանք ու զոհողութիւն զանց չ՛ըրաւ այս ազգային հանդէսը փայլուն ընելու համար, կը շնորհաւորենք զինքը:

ԴԻՏՈՂ ՄԸ



**ԲՍՅ ՆԱՄՍԿ (1)**

**ԳԱՀԻՐԷՆ**



«Արեալոյս»ի թիւ 211ի մէջ Պ. Լ. Մկրտչեանի պահանջած Պասոյ Ասեանը՝ իր դէմ եղած կարգ մը ամբասանութեանց հանդէպ (եւանի թէ այդպէս ըլլար) գոր թուած ըլլար «Փիւնիկ» մանաւանդ «Անթաղ Դիակը» (Մսասիպարէս)ովը՝ ուրկէ միայն ազդուած Պ. Լ. Մկրտչեան. փորձած է հանրային միտքը վերստին շփոթութեան մը մէջ թողուլ իրեն յասուկ նիզուկութեամբ մը զարտուղի միջոցներով ինքզինք արդարացնելու ելլելով, որ սակայն, ա՛լ անլի ծանրակեիո կը դարձնէ դասապարտութիւնը՝ ծանրանալով բոլոր այն ամբասանութիւններէն միայն իր յեղափոխական կեանքին կրած «չարաչար նախասինքին» վրայ գոր ըրած ըլլայ «Փիւնիկ»:

Արդ, նամակագիրս, չ'պիտի փութկոտութիւն ցոյց տամ առ այժմ Պ. Լ. Մկրտչեանի յեղափոխական կեանքին վարագոյրը բանալու՝ պատասխանաւորութիւնս յայտնելով ի պահանջել հարկին, եւ անուուս Պ. Մկրտչեան ինքն ալ կրնդունի թէ ես ալ մէկն եմ եղած այն կեանքին մէջ ապրողներէն ու գիտեմ ինչ որ պէտք ըլլայ ըսելու:

Թողով զՊ. Մկրտչեան իր բուն դերին մէջ որ խաղայ դեռ, ես կուզամ իրեն ուղղել այն «արիկայ» բառը գոր տուած էր «Փիւնիկ»ի Խմբագրին, (եւ այս տեղ բնաւ միտք չունիմ Տ. Ս. Բիրասը պատշապանելու. այդ իրեն միայն յասուկ է.) այս բացարձակ իրողութեան առջեւ ու հետեւաբար բացարձակ իրատունով որով պիտի համարձակիմ զինքը յրժեւ կամ մասնիչ անուանելու, ժողովուրդի անաչառ դատողութեան ենթարկելով այն պարա-

(1) Այս նամակը յարգելի Յօդուածագրին բացարձակ պատասխանատուութեան տակ կը հրատարակեմ:


Մ. Խ.

գայն որ ամենէն ուամիկն ու սգէտն անգամ կրնայ ըմբռնել թէ՛ չարամտութիւնը ուրուականի մը պէս կը կանգնի իր բոլոր սեւ արհաւիրքովը:


Թո՛ղ դատէ ժողովուրդը. Պ. Մկրտչեանի իր կողմէ կարգած պատու դատարաններուն քովիկը անոր փարանքէզ դաշնակցական բառին միտքը, ու այն ասեմ թող հանի մտածել յարմար անուն մը՝ գոր կարելի ըլլայ տալ յեղափոխական Ս. Գործին մէջ իր կեանքին կրած նախասինքին դէմ պատու դատարանի մը: Ըն՛վ բարեւ:

Գահիրէ 12|9|1901

ՄՍՐԳԱՐ ԳԱԼՅԱՆՍՆ



**ԵՐԿՈՒ ԽՕՍՔ**



*Միտք չունիմ երկար փաստերով, քննադատութեամբ վերանորոգել Ազեքսանդրիոյ Առժամեայ Թաղական Խորհրդոյն իրաւացի՞ թէ անիրաւացի պաշտօնի վրայ կենալը. արդէն բաւական գրուեցաւ այս մասին և ժողովուրդը լուսաբանուեցաւ:*

1850ական թուականներու, ազգային գործերը կամայական, ամիրայական ազգեցութեանց և ճնշման տակէին, մինչև որ ժողովուրդին ձայնը բարձրացաւ և լուսամիտ անձնաւորութիւնք ալ ըմբռնելով Ազգին իրաւացի պահանջը, յօրինեցին Սահմանադրութեան օրէնքները 1860ին: Ի հարկէ իւր քաղաքական ազատութիւնը կորուսած դժբաղդ Հայը՝ չէր կարող աւելի առաջ երթալ և այսչափն ալ փոքր ի շատէ սփոփանք մ'էր իրեն:

Այդ օրէնքը գործադրուեցաւ ամբողջ բառատուն տարիներ: Մեծափարթամ ընտանիքներէն սկսեալ մինչև

յետին աղքատ հայ ընտանիքները հպատակեցան անոր՝ իբրև ազգային ներքին իշխանութեան. օրէնքը խրատութիւն չէր գնեցանք. Պատրիարքէն Գաղաքական Ժողովէն, Երեսփոխանական Ժողովէն, Թաղական և Հոգաբարձութեան Վարմիններէն մինչև յետին հայ անհատը: Չեմ կարծեր թէ դեռ գտնուի մէկը, որ ըմբռնած չ'ըլլայ այս իրողութիւնները:

Եւ սակայն այսօր հոս, Աղէքսանդրիոյ մէջ, ազգային զուտ ներքին գործոց համար կառավարութեան միջամտութիւնը կազմուի պաշտօնապէս, և նա ալ ծպտեալ ոստիկաններ կը խրկէ Եկեղեցին և շրջափակին մէջ՝ հսկելու ժողովրդին վրայ. և նորա կողմէն (եռեւակայական) իբրև թէ ազմկայոյց ցոյցի մը առաջը առնելու համար:

Ժողովուրդը անտեղեակ՝ ըստ սովորութեան Եկեղեցւոյ աւարտումէն յետոյ կ'ընտրուի. բայց չը վրիպեր ուշադրութենէն որ իրենց մէն մի շարժումը լրտեսող կայ:

Ամօթ չէ՞ մեզի, Հայոց և Օտարաց առջև, երբ այսօր Հայոց ազգը գլուխը բարձր բռնած՝ անարգ բռնապետութեան դէմ՝ Ազատութիւն և Իրաւունք կը պահանջէ. և այդ պատճառաւ հարիւր հազարներով կը հալածուի, կը բանտարկուի, կը նահատակուի. մնացեալը, թափառական, աշխարհիս ամեն կողմերը ինչպէս կ'ապաստանին և կ'ապրին իրենց անխոնջ աշխատութեամբ, սպասելով լաւագոյն օրերու: Անխաճութիւն չէ՞ կռուարարութեան գոյն տալ Ազգին ներքին գործոց օրինաւոր կազմակերպութեան համար գրուած հանրագրի մը, և ժողովրդին զգացումներուն և փափաքներուն թարգմանութիւն մը յօդուածներուն:

Սահմանադրութեան գործադրութեամբն է որ ժողովուրդը կ'ընտրէ իր վարիչները, որոնք, իրենց կարգին,

պարտական են պարբերաբար իրենց պաշտօնավարութեան համարատուութիւնը ներկայացնել Ազգին: Ուրեմն ըստ սահմանադրութեան, ամեն տեղ Ազգն իրաւունք ունի պահանջելու օրէնքը գործադրուած տեսնել. այսպէս չէ՞ն նոյն իսկ սահմանադրութեամբ կառավարուող Եւրոպական անկախ ազգերը. ինչու ուրեմն գրգռել օրինասէր և խաղաղ ժողովուրդը, և անոր փափուկ զգացումները վիրաւորել, իրաւունքներն անտես առնել, և զայն նախատելով՝ ազմկայոյց, խռովարար անուանել. ամօթ չէ՞ մեզի:

Մեր ազգը սիրած է ամեն ժամանակ, ամեն տեղեր, մեծատունները, երևելիները, Մեծաշուքները, և միշտ պատկառանք վերաբերուած է նոցա հանդէպ. կը բաւէ որ անոնք եղած են բառին բուն նշանակութեամբը, ազգասէր, դպրոցասէր, և այլ բարեգործութիւններով յայտնի անձեր: Այդպիսի Անձնաւորութիւններ կրնան գլուխուիլ և այս տեղ, աւելի լաւ. և ուրախ չէ՞նք ըլլար տեսնել տեղոյս Հայոց մէջ ալ, վերոյիշեալ առաւելութիւններով օժտուած Հայեր. սա միթէ պարծանք չէ՞ մեզի:

Այս սև օր, սև ժամանակին մէջ, որ համայն Հայութիւնը կործանման և բնաջնջման ահեղ վտանգին ենթարկուած է, մենք այստեղ Թաղականի խնդրոյ համար ոստիկանութեան դիմենք, նորա միջամտութիւնը հայցենք, մտնանք մեր սրտաճմլիկ վիճակը, առաջուց տրուած օրինաւոր Հանրագրոյ մը դէմ՝ նոր հսկայ հանրագիր մը պատրաստենք, մտքերը պղտորենք, կուսակցութեանց սերմեր ցանենք: Մինչև հիմայ մեր հասկցածէն սաչափը ճշմարտապէս ըմբռնեցինք թէ՛ վստահութեան կամ անվստահութեան խնդիր չկայ, և թէ՛ Առժամեայ Թաղական Խորհրդոյ անդամոց արժանիքը ճանչցուած և ստուգուած ալ ըլլայ,

դարձեալ՝ երբ ուզենք նոր Թաղական Խորհրդոյ մ'ընտրութիւնը կատարել, չեմ կարծեր որ օրինաւորութենէ շեղած, խռովարարներ և ալմկայոյց ցուցարարներ եղած ըլլանք, այլ պարկեշտ քաղաքացիներ որ կուզենք մեր ազգային ներքին օրէնքը Թաղաւորեցնել: Այս է կարծեմ ամեն ճշմարիտ հայ մարդու մտածումը:

Այո, ամօթ է, և ծանր զրգարտութիւն որ կընեն ժողովրդի մը հանդէպ, այս բռնած ընթացքին (լինին պաշտօնական կամ անպաշտօն անձինք այդ ընդհները). երբ այդ ժողովուրդը իր արինակիցներն են՝ արեան ծովեր տեսած, բանտեր, շղթաներ կրած, և տասնեակ բիւրաւոր սիրելեաց և հարսպատաց սրախողխող լինելուն ականատես եղած, և այդ սգաւոր ժողովուրդը հեռացած եկած ապաստանած այս տեղ. բողբեղով՝ բռնաւոր կառավարութեան, կամայականութեանց, և անիրաւութեանց դէմ. և այսօր Թաղականի խնդրոյ մ'առթիւ ոմանց կողմէ կուզուի ժողովուրդին ձայնը խեղդել: Ո՛հ, չ'են յաջողիր. կը բաւէ որ ժողովուրդը իրեն նշանաբան ընտրած է իրաւունքը և օրէնքին դործադրութիւնը:

Ա՛լ չեմ խօսիր. բաւական համարելով այսչափս միայն այսօրուան ներկայ կացութեան վերջ տրուելու համար, խորին ուշադրութիւնը կը հրաւիրեմ Եղիպտոսի Առաջնորդ Գերապատիւ Յովսէփ Եպիսկոպոս Այվազեանի և Առժամեայ Մեծապատիւ Թաղական Խորհրդոյ Անդամոց:

ԵՐՈՒԱՆԻ Մ. ՊՅՅԱՃԵԱՆ

26|8 Մեայ. 1901 Ա.ս.

ՄԵ՛՞՞, ՏԵ՛՛՛ ԽՄԲԱԳԻՐ

«Փիւնիկի 15 թուոյն մէջ, թիւրիմացութեամբ մը, Գահիրէի Հայ Լոս»

րան-Ընթերցատուն ընկ. Գործ. Վարչութեան վերագրուած էր յղացումը այն գեղեցիկ գաղափարին, որով Մայր հայրենիքի բիւրաւոր նահապետաց խնկելի յիշատակը պիտի տօնուէր Սեպտ. 8ին տեղւոյս Ս. Եկեղեցիին մէջ:

Արդ, Լոսարան — Ընթերցատան Գործ. Վարչութիւնս կը վաւթայ յայտարարել թէ՛ այդ գեղեցիկ գաղափարին յղացման իրաւունքը իրեն չի պատկանիր, այլ քանի մը հայրենասէր Ազգայիններէ կազմուած կարգադիր Մասնախմբի մը, թէ և Լոսարան-Ընթերցատան ընկերութիւնը սբտով միշտ մօտ է ազգային այսօրինակ նուիրական տօներու և հանդէսներու, սակայն այս տեսակ ճբի պատիւ մըն ալ ընդունելու՝ թոյլ չի տար իր համեստութիւնը. հետեւաբար կը խնդրէ «Փիւնիկի» Պատ. Խմբագրութենէն՝ ճշդել իրողութիւնը, իր յառաջիկայ թուով:

Գործ. Վարչութիւն  
ԿՆԻՔ

9 Սեպտ. 1901

ԳԱՀԻՐԷ

ԳԱԼՍՏԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԸ

... ԽՄԲԱԳԻՐ ՏԵ՛՛՛

Հանեցէ՛ք անկիւն մը շնորհել երկսողիս:

Միայն Աղեփասնորիացիք չ'են որ Թաղականի խնդիր ունին. այս սեղ ալ դպրոցական խնդիր մը ունինք որ բաւական հետաքրքրական եւ միանգամայն ծիծաղիլի կողմեր ունի. անա՛հաւաստի աղբիւրէ՛ք քաղածս պատմեմ:

Այժմու դեռահաս, դեռափորն երկու երիտասարդ հոգաբարձուներ — որոնցմէ մին ծանօթ է արդէն իբրեւ անբաւարարականութեան սահմանը գծել տուող, դասիւստակ-վարժուհի Օր. Ս.

Մանիսալեանի ամսաթուղթին 100 դր. գեղջել կ'ուզեն ՚ի վարձատրութիւն այդ դպրոցէն առաջին անգամըլլալով՝ այս սարի երեք երջանաւարս հանելուն։ Հարկ է գիտնալ թէ՛ Վսեմ. Տիգրան բաւան ու Պասկ. Քաղաքական Ժողովը նախորդ Պատրիարքին բախանձանօք վկայուած վարժուհիմբ կ'ուզեն. Սրբազան Պատրիարքն ալ Մեզպորտեան վարժարանին առաջին ուսուցչուհի Օր. Ս. Մանիսալեանը յարմար կը գտնէ այդ պատճենին եւ կը յանձնէ զայն կեդրոնի Ուսումնական Խորհրդին ֆննութեանը։ Օրիորդը, Ուսումն. Խորհրդէն տրուած առաջնակարգ վարժուհիի վկայականն եւ իր պատճենավարած ուրիշ ֆանի մը դպրոցներու տեսուչներէն ստացած վկայականներն ՚ի ձեռին՝ 10 ճր. ոսկի ամսաթուղթով կը դրկուի Գահիրէ, ուր Վսեմ. Տիգրան բաւային ու Պասկ. Քաղ. Ժողովին կողմէն գնահատուելով՝ պատճենին գլուխը կ'անցնի։ Քառասունուկէց տարուան դպրոցէ մը, առաջին անգամն ըլլալով, երեք երջանաւարս կուտայ. յառաջիկայ սարի ալ 10 երջանաւարս հասցնելու պատրաստ է. նոյն իսկ այս տարուան հարցաֆննութեանց ժամանակ յիշեալ հոգաբարձուները հրապարակաւ դրուատած են Օրիորդին արժանիքը, գործունէութիւնն ու անձնութիւնը։ Քայց այս գեղջը կ'առաջարկեն ո՛չ թէ ազգ. սնուկին շահ մը ցուցնելու, այլ Օրիորդը վճարուելով հրաժարականը ձեռք բերելու համար. թէ ինչո՞ւ. — վասն զի ծանօթ Օրիորդներ ունին երբեք պատրաստի՝ անոնցմէ մին բերելու համար։

Եւ որովհետեւ Օր. Ս. Մանիսալեանը պատճենի կոչողը Վսեմ. Տիգրան բաւան եղած է ու Պասկ. Քաղ. Ժողովը, եւ ոչ թէ՛ այդ առժամեայ հոգաբարձութեան անփորձ, երիտասարդ անդամները, Օրիորդը՝ առանց այդ խնդիրներուն կարեւորութիւն տալու,

վերամտօսին օրը պատճենին գլուխը կ'անցնի։ Ասոր վրայ, Պ. Տեօրէնը կը հաղորդէ Օրիորդին թէ՛ հոգաբարձութիւնը զինք դադրեցուցած է պատճեն. Օրիորդը կ'առարկէ որ զինք պատճեն դադրեցնելու, իր ամսաթուղթը գեղջելու ձեռնհաս են անոնք միայն՝ որ զինք կոչած են այդ պատճենին. եթէ իր հրաժարման արդարացի պատճառ մը կայ, ա՛ն ալ Ազգ. Վարչութիւնը խնդիրը ֆննելէ վերջ եւ ո՛չ թէ հոգաբարձու պարոններուն ֆեյժովը կը հրաժարի, պայմանաւ որ մինչեւ ցաւարս ֆննութեան ձրի պատճենավարէ։ Պարոն Հոգաբարձուները, Օրիորդին այս անսպասելի պատասխանին վրայ իրենց դիւրազգածութիւնը վիրաւորուած տեսնելով եւ ինքզինքնին անձեռնհաս զգալով հրաժարեցնելու այսֆան սարիներէ ի վեր պատճենավարող վարժուհի մը ինչպէս է Օր. Ս. Մանիսալեանը, կը փակեն վարժարանը տասնութիւց օրուան համար, պատրուակելով վարժարանին շէնքին ինչ ինչ նորոգութիւններու պէտքեր։ Այսպէս ահա՛ աւակերտները պիտի չսպիտեն 15 օր ալ փողոցները, ազգային սնուկն ալ յոսպէտս պիտի վասնէ 20-30 ոսկի ալ։ Այսօր շաբաթ մըն է, դպրոցը գոց է. տեսնենք զայլ շաբթու ի՛նչ պիտի ընեն։ Արդէն Հոգաբարձու Պարոնները դիմած են Սրբազան Առաջնորդին, իրենց կամքը ֆալեցնելու համար. Սրբազան Հայրն ալ ըսած է թէ՛ անոր ամսականին գեղջ չ'ըլլար, ֆանի որ դեռ նոր, 5-6 ամիս առաջ եղած էր այդ յատելումը։

— Քայց մենք հոգաբարձու չե՞նք, ուզածնիս ընելու ազատ չե՞նք.

— Այդ մասին ո՛չ. եթէ անձեռնիդ վիրաւորեալ տեսնէք, հրաժարեցէ՛ք,

— Ինչո՞ւ պիտի հրաժարիմ.

Այս կ'ըլլայ մեր պատճենամոլ պարոններուն վերջին խօսքը. իմ կողմէն թառ մը չ'եմ աւելցրներ, ողջմիտ ընթերցողաց կը թողում լուսաբանել խնդիրը։

Նամակս փակելու միջոցին, դպրոցին աւակերսուհիներէն մէկուն հօրմէն կ'իմանամ բուն գաղտնիքը. — Օրհորդը հպարտ է եղեր, այդ պարուններուն դիմացը չը բճնիր եղեր եւն. . . քէ եւ իրենք բաւերու խոսովանած են քէ Օր. Մանիւսալեան փորձ մանկավարժունի մը, դաստիարակունի մ'է.


Սակայն ի՛նչ պէ՛տք կայ այդ խեղճերուն վկայութեան. անո՛ւ գործը ցոյց կուտայ. Գալստեան վարժարանի աւակիրներուն ծնադաց կողմէ կրնամ խղճի հանդարտութեամբ յայտարարել քէ՛ ամենքս ալ գոհ ենք մեր աղջիկներուն տուած խնամեալ կրթութենէն եւ դաստիարակութենէն:

ԵՐԿՈՒ Ա.Ղ.ՋԿԱՆ ՀԱՅՐ


10 Սեպտ. 1901

Ս. Գ.

Գահիրէ



ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՅԺՄԷՆՈՒԹՅՈՒՆ



Թան, Քրակասկան կարեւոր օրաքերքը, Սեպտ. 14 թուով «Հայաստանի մէջ» վերնագրով խեղճագրական մը հրատարակած է, որուն կը փութանք քարգմանութիւնը տալ Փիւնիկի Պաս. ընթերցողներուն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ

Կ. Պօլսէն, Սօֆիայի ճամբով հասած հեռագիրը, զոր Թան հրատարակեց երեկ իրիկուն, զարմացուցած է զանոնք միայն, որոնք չեն հետեւած ուշի ուշով կամ լոկ՝ իրենց կանխակալ կարծիքներուն ու փափաքներուն մէջէն կը տեսնեն Արևելքի դէպքերը: Թուրք կայսրութեան մայրաքաղաքին մէջ, ուր լուրերն ա՛յնչափ ուշ կը հասնին ու ա՛յնչափ դժուարաւ կը տարածուին, քանի մ'օրէ ի վեր մէ՛կ զրոյց միայն կը

չըլլի, այն է Մուշի ծանր դէպքերուն զրոյցը, որոնք Սեպտ. 1ին ու 2ին տեղի ունեցած են: Պիթլիսի վաչին — որուն նահանգին տակն է Մուշ, եփրատի մէկ ճիւղին եղերքը շինուած քաղաքը, վանայ լճին մօտ, — հրաման է ստացեր հոն երթալու և Տ վաշտ զօրք զրկուած է հետը, սպարապետութեան կողմէն:

Կը բաւէ մտօք փոխադրուել վեց տարի ետ, 1895 տարին, ու վերջիշեւ խուլ ժխորները, որոնք լուսեցան Սասունի ու Հայկական Ջարդերուն ահռելի սուամին պայթումէն առաջ, այդ վրդովեցուցիչ լուրերուն արժէքն ըմբռնելու համար: Անշուշտ, Դուռն ու Պալատը, աշխարհիս չափ հինաւուրց վարպետութեան մը հաւատարիմ, կը ճգնին հանդարտել կարծիքը, կը պնդեն թէ՛ երկու անհատներու միջև պարզ կռիւ մ'է այն, խոստովանել չ'ուզող կառավարութեանց բոլոր անօգուտ ու դասական հնարներուն կը դիմեն:

Ո՛չ Եւրոպայի դահլիճները, ո՛չ ալ հանրային կարծիքը, պիտի չ'խաբուին: Դեռ շատ նոր անցեալի մը փորձառութիւնը հո՛ն է՝ իրենց սովորեցնելու համար թէ ի՛նչ կարևորութիւն կը վայելէ տալ Սուլթանին ու իրեններուն բողոքներուն:

Դեղին Տետրակներն ու կոստյո Տետրակները լոկ, հակառակ պաշտօնական հրատարակչաց արուեստին ու անոնց վաւերական հաստատումներուն անզգայութեանը, ինքնին կը կազմեն անմերժելի վաւերաթղթեր, ամեն ճոռամբանութիւններէ աւելի ջախջախիչ ամբաստանագրեր:

Եթէ Եւրոպան, շուարած, ներքին նախանձներէ ու մրցութիւններէ ջլատուած, պատշաճօրէն չի գիտցաւ դարմանել հայկական Ջաջդերուն արիւնոտ գայթակղութիւնը, և — ինչպէս որ այնքան նշաններ կը հաստատեն այսօր — չ'գիտցաւ իսկ հար-

կաւոր միջոցները ձեռք առնել աշխատանքներուն վերադարձն արգելելու համար, դոնէ յուսալի է թէ՛ չ'պիտի թողու որ իր աչքին փոշի փչուի, և թէ՛ պիտի տեսնէ մեկին, պայծառ, իր բոլոր տարածութեանը մէջ, ներկայ ժամուան վտանգը և սրտով պիտի հագտանի նուազեցնելու իր բաժինը. պատասխանատուութեանց մէջ, զորս, աւանդ, չ'կրնար բոլորովին նետել իր վրայէն :

Մուշի լուրերը ծանրակշիռ են անոր համար որ անոնք կուգան շրջանակուիլ նոյն և նման լուրերու ներդաշնակ շարքի մը մէջ և կը հաստատեն ո՛չ թէ տեղային խառնակութեան մը ցիրուցան պայթումը, այլ, լայնատարած ակիքի մ'ազահով ընթացքը, անդիմադրելի հոսանքի մը հաստատուն յառաջխաղացումները: Երկար ատեն կայ որ լուրջ ազդարարութիւններ կը լըսուին :

Ամենէն աւելի ձեռնհաս մարդիկ, ամենէն աւելի իրազեկները, ամփոփած են կացութիւնը յիշատակագրի մը մէջ, խմբագրուած՝ խաղաղութեան Գօնկրէ ին համար, ոչ հիմայ կլասքօ կը գումարուի: Այս երկը՝ «Հայկական խնդիրը ինքնակառուցութեամբ» տիտղոսով կը պարունակէ հոծ պատմութիւն մը, դէպքերու կուռ շղթայաւորում մը:

Կեղքակացնէ ցոյց տալով թէ՛ «ո՛չ միայն Պերչիկի Բաշնագրիկ 61դ յօդուածով մասնաւորապէս բարեկրօնողները չ'են գործադրուած», և ո՛չ իսկ սկսած են. քէ ո՛չ միայն Տերտրեանց 1895 Մարտի-Ապրիլի ծանուցագիրը, այսինքն ֆաղափարեալ աշխարհիկ հանդիսաւոր ու միաժամայն աշխարհաբարձիկը» մեռած տառ է մնացած Սուլթանին համար, այլ եւ ամեն բան երկիւղ կ'ազդէ թէ՛ այս տարուան մասնաւոր սպաննութիւններէն յետոյ մի՛ գուցէ վերսկսին մեծ

ջարդերը: Այս պահուս, թուրք կառավարութիւնը կը ջանայ մանաւանդ բաւի ցրուելու Ձեթունի ու Սասունի հայկական համախառնումները:

Ձեթուն նոր զօրանոցներ շինուցան և ամեն տեղ բերդեր կ'իշխեն կիրճերուն ու կապաններուն: Սասուն, Տալուրիկի ու Կէլի-Կուզանի գեղացիները կը ստիպեն թողուլ իրենց լեռները, զանոնք աւելի դիւրաւ սպաննելու համար դաշտին մէջ:

Բոս Արմէնիակի թղթակցութիւնները — որ կը բխի նականատես վկաներէ, և որոնք կարծես մարտիրոս ժողովրդի մ'երկարաձիգ ցաւագին ճիշն են, — անթիւ մանրամասն դէպքերովը, պերճախօս միօրինակութեամբ մը, չ'են դադրած նկարելէ անհաւասար մենամարտի մը դարձուածները:

Այսօր, բոլոր անշուքմակալ դիտողները կը խոստովանին թէ՛ կացութիւնը նոյնն է ինչ որ էր 1894ին, սատարբերութեամբ սակայն թէ՛ այն ատեն ջարդերը կատարուելէն վերջը յայտնուեցան, նոյնմբերին. մինչդեռ այս պահուս, մահացու հարուածը դեռ չէ՛ իջած, դիւական գործը դեռ չէ՛ աւարտած, և հետեւաբար ատեն կայ ազդուօրէն միջամտելու՝ առաջն առնելու համար:

Սասունի մէջ պաշարման վիճակի հրատարակութիւնը կերպով մը նշանն է ոճրին: Մուշի միջադէպը՝ վարագորին բացումն է արիւնոտ տուամին վերսկսմանը:


Գնդերուն առաքումը, ո՛չ միայն չ'երաշխաւորեր հանդարտութիւնը, և նահապետական նոր վտանգ մը կ'ստեղծէ Համիտիկներու զոհերուն համար:

Ամեն ոք կ'զգայ թէ՛ ժամը հանդիսաւոր է. հանդիսաւոր է դժբաղդ ժողովուրդին համար՝ որ կ'սպասէ մահաբեր հարուածը. կառավարական ձեւին ու մարդո՛ւն համար՝ որ երկրորդանգամ կ'ստանձնեն մարդկային ազգի

խղճին դէմ այսպիսի արհամարհող  
կոչի մը պատասխանատուութիւնը:

Հանդիսաւոր է մանաւանդ եւրոպային համար, քաղաքակրթեալ ըստ  
ուած տէրութեանց համար, որոնք չ'են  
կրնար ձեռքերնին լուալ թափուած  
ա'յնքան արիւնէն, որոնք տխուր տե-  
սարանն ընծայեցին իրենց համաձայնու-  
թեան սնանկութեանը, առաջին ջար-  
դերուն ժամանակ, և որոնք, ճիշդ այս  
պահուս, ունին դեռ 'ի ձեռին' այս ահ-  
ռելի տեսարաններուն վերադարձն  
արգիլելու միջոցը, և հայթայթելու  
Հայաստանին՝ տանելի կացութիւն մը,  
երաշխաւորելով հանդերձ թուրքիոյ՝  
իր ապահովութիւնը, և աշխարհի՝ խա-  
ղաղութեան պահպանութիւնը:

Պէտք է յուսալ թէ՛ դիւանագի-  
տութիւնը պիտի գիտնայ այսպիսի նուիրական  
գործի մը բարձրութեան վրայ  
երևիլ և թէ՛ պիտի հաւկնայ որ այս-  
պիսի վայրկեաններ՝ էպպէս կարճ են  
ու փախստեայ, ու ա'լ չ'են վերադառ-  
նար:




Իստրաւալ ԹՅՆԻ ԱՆՅԵ ԹԻՂԻՆ ԱՆՅԵ  
ԿՐ ԿԱՐՊԱՆԸ .

—Տէլքասէ եւ Քիյեար. — Փրանսայի  
Արտաքին գործերու նախարարը  
Մ. Տէլքասէ, այսօր ընդունեց Մ. Բ. Քիյեարը,  
«Բո Արմենիա»ի խմբագրապետը,  
որ անոր մասոյց բարենորոգումներու  
(ամենափոքրիկ ձևին մէջ) ծրագիր  
մը, թրքական Հայաստանի նահանգներուն  
համար, Իրոշակեան գործօն կուսակցու-  
թեան կողմէն յորինուած, և մանաւանդ,  
Մ. Քիյեար, նախարարին ուշադրութիւնը  
հրաւիրեց Հայկ. նահանգներուն կացու-  
թեանը, Զեթունի, Սասունի, Մուշի ու  
Տիգրանակերտի մէջ ջարդերուն անխուսա-  
փելիութեանը վրայ:


Հայասէր հրապարակագիրը զգացրնել  
տուաւ նաև Հայերուն կողմէն

արիւնահեղ վրեժառութեանց վերահաս  
վտանգը, եթէ իրենց վիճակին դար-  
ման մը չ'տարուի:



### ՍՐԻԿԱՅՈՒԹԵԱՆ

### ԾԱՅՐԱՅԵՂՈՒԹԻՒՆԸ



Շատ ցաւալի է տեսնալ որ երբ  
ո և է խնդրոյ մը առթիւ վիճաբանութիւն  
մը տեղի կունենայ, ամէն ոք իւր  
խելքին փչած կերպով և իւր բարոյական  
նկարագրին աստիճանաւ կուգայ խօսք  
մը նետել որով, բուն խնդիրը մէկ  
կողմ մնալով՝ վիճաբանութիւնը հազար  
ու մէկ տարբեր ճիւղերու կը բաժնուի  
և այլ ևս դադրելով լուրջ վիճաբանու-  
թիւն մը ըլլալէ, աւելի փողոցային  
կռուի մը կերպարանքը կառնէ:

Այսպէս, մի քանի շաբաթէ ի վեր, Աղէքսանդրիոյ Աղգայինները հետաքրքրող  
խնդիրը ծագում առած էր յօդուածէ  
մը, որով Աղէքսանդրիոյ Թաղ. Խորհրդոյ  
գրագիրը նոյն Խորհրդոյ փաստաբանի  
պաշտօնն ալ ինքնիրեն ստանձնելով,  
ուղած էր հաւատայնել թէ ներկայ  
Թաղ. Խորհրդոյ կազմութիւնը օրինաւորապէս  
ժողովրդային ընտրութեամբ կատարուած է:  
Ինչպէս կան էր որ իրողութեանց մօտէն  
տեղեակ անձինք չպիտի ուզէին լուր-  
թիւն պահել այդչափ խոշոր սուտի մը  
հանդէպ, ուստի ինչպէս ուրիշներ,  
նոյնպէս մենք ալ մեր գիտցածը գրեցինք  
այդ մասին և ճշմարտութիւնը բայար-  
ձակ կերպով երևան ելաւ:

Ասոր մէջ Թաղ. Խորհրդոյ անդամոց  
անձին դէմ ո' և է հակառակութիւն  
կամ վերոյիշեալ յօդուածին պատասխանող-  
ներուն քով ո' և է փառասիրութիւն  
փնտռելը և ասոր անոր

առևտրական կամ պաշտօնական զբաղմունքը, ընկերական դիրքը, անձնական արժանիքը քաղցրատուքներու եւ անհեթեթ բաղդատութիւններու նիւթ ընելը՝ պարզապէս անմտութիւն է, եթէ չուզենք ըսել նպատակաւոր չարամտութիւն: Դժբաղդաբար գտնուած է մէկը որ իւր ֆանթազիէ (fantasie) ուղեղին Մանրաքիֆ տրամաբանութիւնովը, յառաջիկայ նախագահական ընտրելիութեան խնդիր յարուցանելու ֆանթեզիին ունենայ երևակայական քանի մը հազար հոգիներու կողմէն խօսելով, առանց դիտնալու թէ ժողովուրդը չէ՛ որ կընտրէ Նախագահը, այլ Թաղ Խորհրդոյ անդամները իրենց մէջ իրենք կընտրեն Նախագահն ալ, Դեր-Նախագահն ալ են. նաև առանց հաշուելու որ եթէ Թաղական ընտրուիլը այդ խնդրու կրակ ֆանդէզիտէին համար փառասիրութեան nec plus ultra գոհացումն է, մենք ա՛յն աստիճան անտարբեր ենք այդ տեսակ փառքի համար որ այդ բանը մեր մէկ մազն անդամ չերերցնենք. կը կրկնենք ուրեմն որ մեր գրածը պարզապէս գիտցածնիս ըսելով ճշմարտութիւնը երևան հանել է և ոչ ուրիշ բան.

Ուրիշ մ'ալ կելլէ պնդելու թէ այս ինչ թերթը որ վերոյիշեալ ճշմարտութիւնը յայտնող գրութիւնները կը հիւրընկալէ իւր էջերուն մէջ, մասնաւոր անձի մը սեպհական օտկանը եղած կըլլայ և քիչ մ'ալ աւելի առաջ երթալով կուզէ հաւատացնել թէ ինչոր գրուի այդ թերթին մէջ, նոյն մասնաւոր անձին պատասխանատուութեան ներքե պէտք է եղած ըլլայ: Մենք միանգամ ընդ միշտ բացարձակապէս բողոքելով այդ արտառոց գաղափարին դէմ, կուզենք միայն սա չափը ըսել թէ, երբ խնդրոյն ծագման առիթ տուող յօդուածը հրատարակող թերթը մեր պատասխաննալ հրատարակել կը մերժէր, նոյն իսկ ատոր համար ըլլա-

լիք ծախուց մէկ մասն ալ կանխադրպանելէ վերջը, բնական էր որ եթէ պատրաստ չի գանուէր երկրորդ թերթ մը, պիտի պարտաւորուէինք ստեղծել զայն. բայց արդեօք այդ պարոնները կուզէին որ վերոյիշեալ յօդուածը անպասխանի՞ մնար որպէս զի ուզածնուն պէս կլլեցնէին: Մենք ի պատիւ հայ մամուլին կը սիրենք հաւատալ որ եթէ եգիպտոսի մէջ հարիւր հատ լրագիր ունենայինք, անոնց 99 հատը սիրով և յօժարութեամբ պիտի ընդգրկէին ճշմարտութեան դատը և գուցէ մի միայն 100րդը բացառութիւն կազմէր, արդեօք այն ատեն ալ պիտի ելլէին ըսելու թէ 99 թերթերնալ մեր օտկաննե՞րն են, ևն ևն.

Ինչպէս որ վերը բացատրեցինք, վիճարանութիւնը բուն խնդրէն շեղելով՝ անհաճոյ և միանգամայն պարսակելի կերպարանք մը առած է և օր ըստ օրէ աւելի արագաբար կը յառաջանայ այդ անվայել շաղկին մէջ:

Բնականաբար մենք այդ պարոններուն չենք կարող հետեւիլ իրենց ընտրած ճամբուն մէջ և զգուանքով հանդիսատես միայն կրնանք ըլլալ իրենց շահատակութեանց, և եթէ այսօր պարտաւորեցանք վերջին սնդամ մ'ալ հրապարակ իջնել, պատճառը այն է որ արժանահաւատ աղբիւրէ՛ մը տեղեկացանք թէ մէկ կամ մի քանի սինլքորներ յանդգնած են իրենց ծայրայեղ սրիկայութեան նոր մէկ ապաշոյյնալ տալ, Թաղ Խորհրդոյ անդամներէն մէկ կամ երկուքին նամակներ զրկելով անոնց ամենէն նուիրական զգացումները վիրաւորող և ամեն պարկեշտ ու պատուաւոր մարդու համար անհանդուրժելի խօսքեր գրած են և այդ գարշելի արարածները իրենց անպատկառ լիտութեան հետ նաև ամենացած վատութիւնն ունեցած են, իրենց մրտած թուղթը առանց ստորագրութեան զրկելով: Պաշտօնական մարմնոյ

մը նոյն իսկ արարքը քննադատելու  
ատեն անոր անդամոց անձնական  
դիրքը, արժանիքը, պատիւը շջափող  
ամենափոքր ակնարկութիւն ներելի  
չէ, վասն զի պաշտօնական մարմինը  
ուրիշ է, զայն չազմող անձնաւորու-  
թեանց անհատականութիւնն ուրիշ է,  
մէր մնաց որ ներկայ պարագային,  
յուզուած խնդիրը մի միայն Թազ.  
Խորհրդոյ առժամեայ հանդամանքը  
ուրացողի մը դէմ ճշմարտութիւնը  
հաստատելու մէջ միայն կը չլայանայ:

Թազ. Խորհրդոյ առժամեայ հան-  
գամանքը հաստատել և ժողովրդային  
օրինաւոր ընտրութիւն պահանջելը  
ընաւ երբէք անոր անդամոց անար-  
ժանութիւնը չենթադրեր, ընդհակա-  
ռակը ո՞վ կերպիսաւորէ որ ժողովուր-  
դը գնահատելով անոնց արժանաւո-  
րագոյնները ըլլալն՝ չի փափաքիր ի-  
րեն քուէնովը օրէնքի նուիրագործումը  
տալ անոնց պաշտօնակալութեան. որով  
թէ՛ իրենց առժամեայ հանգամանքը  
կը վերնայ եւ թէ՛ օրէնքին գործա-  
դրութիւնը պահանջողներն ալ իրենց  
փափաքը դո՛ւրացած կը տեսնան. վասն  
զի պէտք է խոստովանիլ որ առժամ-  
եայ Թազ. Խորհուրդ մը միշտ բացա-  
ռիկ պարագաներու մէջ կը կազմուի  
և ժողովուրդին հանդէպ՝ իւր գործերը  
ինքնիրեն վարելու անկարող նկատուած  
մարդու մը վրայ պաշտօնապէս դըր-  
ուած խնամակալի (curateur) մը դիրքը  
կունենայ և ինչպէս որ յայտնի է, խնա-  
մակալ մը ո՛րչափ ալ սիրելի ըլլայ իւր  
խնամոց յանձնուած մարդուն, իւր  
պաշտօնին անունը բաւական է այդ մար-  
դուն համար նուաստութիւն մը հա-  
մարուիլ. ուրեմն այդ անանուն սրիկա-  
ները ինչո՞ւ կելլեն մեր պարզ սկզբ-  
բունքէ խնդրոյն միջամտել իրենց ե-  
պերելի միջոցներով. նախ գիտնանք  
թէ ո՞վ են անոնք, քանի որ անուն մը  
իսկ չունին. դալան են թէ վայրենի  
մարդչ ամեն պարագայի մէջ սպահով

ենք որ արդարութեան թշնամիներ,  
ճշմարտութեան հակառակորդներ, ի-  
րարու ձեռք սեղմելու սահմանուած  
անձնաւորութեանց մէջ որոմ ցանոզ-  
ներ և մի միայն պղտոր շուրի մէջ ձուկ  
ողտալով ապրող կարծրացած ոճրա-  
գործներ են ատանք:


Գիտենք որ Ազե. քառուրդոյ մէջ  
բոյն դրած են այդ տեսակ մի քանի  
ցած արարածներ որոնք իրենց մասնա-  
գիտութիւն ընտրած են անանուն նա-  
մակներու իւրազրուութիւնը, ատոր մէկ  
քանի նմոյշները տեսանք արդէն ասիէ  
հինգ տարիի չափ առաջ և այն ատեն  
անոնց թափանցիկ քողով մը ծած-  
կուած երեսնուն թ. քնելով միայն բա-  
ւականացանք, բայց կերելի թէ հինգ  
տարուան մէջ բաւական յառաջդիմու-  
թիւն ըրեր են իրենց նողկալի արհես-  
տին մէջ որով այժմ իրենց երեսին՝  
թո՛ււքն ալ չի պիտի բաւէ այլ թուրէն  
աւելի բանի մը կը կարօտին:

Բայց թող լաւ գիտնան այդ վատ  
սողունները, այդ խաւարի ծնունդները,  
այդ դաշտնիքի զաւակները, մարդ-  
կութեան այդ աղտերը, այդ թի-  
արանի զարդերը, եր ճշմարտու-  
թեան լոյսը շուտով կուգայ փա-  
րատել իրենց գեանափոր մեքենայու-  
թիւնները և արդէն իսկ իրենց այդ  
անամօթ սրիկայութեան ծայրայեղու-  
թիւնը սկսած է իրենց սպասածին բոլո-  
րովին հակառակ ազդեցութիւնը ունե-  
նալ և որուն հետեանքը թերևս իրենք  
ալ կ'զգան քիչ ատենէն:

Ահա այս է ներկայ խնդրոյն առ-  
թիւ ինչպէս նաև տեղի ունեցող վիճա-  
բանութեանց մասին մեր վերջին խօսքը  
որով մեզ համար վերջնականապէս  
փակուած են այլ ևս ատանք. վասն զի  
ինչպէս որ ըսինք, չենք ուզեր և չենք  
կարող շարունակել պայքար մը որոյ  
մէջ այդ տեսակ վատ և դաշտելի մի-  
ջոյներ կը գործադրուին:

ՄԻՀՐԱՆ ԳԱԼՊԱՆԵԱՆ

Ադեֆս. 19 Սեպտ. 1901



Ողբացեալ Ճաստընեաներ պաշտող-  
ներեն ընկն է այս ֆերբուածին հեղինակը,  
նորաբոյս հայ սաղանդ մը, Սեւ Մովսիս ա-  
փերեն Փարառնի աւագները փոխադրուած  
ծաղիկ մը, որուն կոյս բուրումները պիտի  
վայելեն այսուհետեւ «Փիւնիկ»ի ընթերցող-  
ները:

### Յ Ի Շ Ա Տ Ա Կ Ի Դ

ԱՌ. ՃԱՍՈՒՆԵԱՆՆԵՐ

«Նկարչին գէթ մնայ յիշատակն ի կտաւ,  
Փրփրաօսն ի կնի.  
Կ'անհետանայ քեզ հետ հանճար եւ գոյնակ  
Կ'ուսէ հողին սեւ ննի.  
Պատմութիւնը՝ քերեւս օր մը քեզ յիշէ,  
Ապագայում՝ քի հանի»:

«Դերասանը». (Պ. Ադամեան)

Անշուք մահ մը եղաւ բաժինը կեանքիդ.  
Կեանքիդ որ շատ փուշեր տրաւ քեզ, խեղճ  
մարդ.

Տառապեցար թեպէս ժպտով մը զըւարթ.  
Անշուք մահ մը եղաւ բաժինը կեանքիդ:

Թեպէս յաճախ որոնարից ծափերով,  
Ծաղիկներով ողջունեցիկն քեզ քեռիկն,  
«Երբոր մեզ ցոյց կուտայիր շարն ու վտել»,  
Շուտ մոռցանք քեզ, մոռցանք անունդ  
իսկ անմահ:

Շուտ մոռցանք քեզ, մոռցանք խնունդ իսկ  
անմահ,

Թողուցիկն որ առանց ծափի ու խեղճով  
Իջնէ վերջին վարագոյրը՝ անշքով,  
Անխոնջ կեանքիդ՝ որ շոկ հասնում մը եղաւ:

Սեւերու մեջ դրիկն մարմնոյդ մնացորդ,  
Եւ յանրաբայն հետեւեցանք դազադիդ,  
Թաղոււմը այ՝ վերջադոյսին պէս կեանքիդ՝  
Անցաւ անշուք, անփայլ, մըրթիկ, աննըւազ:

Անշուք մահ մը եղաւ բաժինը կեանքիդ.  
Շուտ մոռցանք քեզ, մոռցանք անունդ իսկ  
անմահ,  
Երբ ողջ էիր, Յիշատակդ այլ պիտի մնայ  
Պատմութեան մեջ՝ նոյն իսկ քի ան չը հանի:  
Գ. ԱՄՊԱՐ

20 Սեպտ. 1901

### Ք Ր Ո Ն Ի Կ

Ա Չ Գ Ա Յ Ի Ն

— Յաւէ՛ս Ողբացեալ ՏԻԳՐԱՆ ԵՐ-  
ԿԱԹԻ կենսագրութիւնը մաս առ մաս  
պիտի հրատարակելու սկսիմք «Փիւնիկ»ի  
յառաջիկայ շաբաթ օրուան թիւէն.  
— Փարոսը. — Ստացանք Փարոսի Բ.  
Շրջանի թիւ 1ը — հետեւեալ պարու-  
նակութեամբ.

Մեր Ողջութիւնը. Խ. — Ռեթեոս Յ.  
Պերպերեան. Մ. Կիրանեան. — Մայրա-  
կան սէր (ոսանաւոր) Յ. Ալփիար. —  
Բրէնս Մորաս (թերթոն) քրգմ. Յ. Սեթ-  
եան.

Ազգային  
Քաղաքական Աւելանք  
Տեղական  
Հեռագրական լուրեր.

Կը մաղթենք որ Փարոսը, շաբաթն  
երեք անգամ երեւնալու առանելու-  
թեանը հետ միացնէ նաեւ ազգ. տեղա-  
կան ու ընդհ. խնդիրներու լուրջ ու  
անկողմնակալ բնադատութիւնը. Թերթ  
մը, որ իր պատկանած ժողովուրդին  
կեանքովը չ'զբաղիր, անոր բարբերուն ու  
գաղափարներուն վրայ, փոփոխութիւն  
չը բերեր, այլ լոկ ընթերցողներուն ժա-  
մանցի ծառայելու, հասարակութեան  
անարթութիւնը գգուելու, եւ գեղ-  
ծումներու դէմ լռելու պատճօնը կըս-  
տանձնէ, գոյութեան իրաւունք չունի:

Ուսի յաջողութիւն մաղթենք եւ յարատեւութիւն *Փարոսի*, որ, ինչպէս կ'երեւի, տպար թերթ մ'ըլլալ կը խոսանայ:


— *Մուշի Զարդերը*. — Երկրորդ ու Դուռը քառասուն ծածկագիր հեռագիրներ կ'իմացնեն թէ՛ Սեպտ. 1ին ու 2ին ծանրակեօն դէպքեր պատահած են Մուշի մէջ: Դուռը թէ եւ կ'ապահովէ թէ՛ պարզ կոխի մ'եղած է երկու անհասներու միջեւ, բայց ձեռք առնուած միջոցները կը ստեն այս հաստատուները: Պիքլիսի Վալիին հրաման ստացաւ Մուշ երթալու եւ Պատերազմ. Նախարարութիւնը Նահանգի հրամանատարին հրամայեց 8 վաշտ զօրք ղրկել հոն: Հասած մանրամասնութիւններէն կը հետեւի թէ՛ Յուլիս 1էն մինչեւ Օգոստոսի վերջը Մուշի եւ Սասունի շրջակայքը Քուրսերէն սպաննուած Հայ զոհերուն թիւը կ'անցնի 100ը, եւ թէ՛ 5 օրուան մէջ 25 սպաննութիւն գործուած է: Պատերազմի բռնելով թէ՛ Գօթանլի Քուրս ցեղապետ Ներիճ աղան սպաննուած է Հայերէն, Քուրսերը կողոպտեցին գիւղը, այրեցին հունձները եւ բանտարկեցին 40 գիւղացիներ:

— Քաղաքիս հայ Նուագածուաց խմբին ապստամբ նուագարանները 24 կտր. գրեթէ 1300 Քրանի արժէքով, հասած, մասնէն հանուած են ու այսօր կը գտնուին նոյն խմբին տնտեսութեանը տակ: — Կը շնորհակալուեմք մեր ազնիւ երիտասարդաց այս վճռական յաջողութիւնը, արդիւնք իրենց յամառ կամքին ու անխոնջ գործունէութեան:

### ԱՐՏԱՔԻՆ

— Կ. Պոլսէն *Թայնլի* կը հեռագրուի թէ՛ Պետական Խորհուրդի Սեպտ. 12ի նիստին մէջ, անդամներէն մէկը, Շեխ-Իւլ-Իսլամի որդին, ճշգրիտ լրո-

ղոսեց քիստոնեայ բնակչութեան նպաստուող առաջարկի մը մերժումըն դէմ ու յետոյ դատարարաց կառավարութեան արդի ձեւը, յայտարարելով թէ՛ անով էրկիրը դէպ ՚ի կործանում կը դիմէր եւ կայսրութիւնը ծիծաղելի կը դառնար: Աւելցուց նաեւ թէ՛ ինք գիտէր որ այս խօսքերը պիտի դուրսէն Սուլթանին ակամջը, բայց իր հոգը չ'էր, որովհետեւ ինք պատրաստ էր գանձակերկնելու Սուլթանին ներկայութեանը:




### ՔՆՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԱՐՇԱԿ Բ. Ի ԵՒ ԱՆՈՐ ՊԱՊ ՈՐԴԻՈՅՆ

ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆ

ՈՂԲՈՅԵԱԼ ԳՐԱԳԵՏ ԵՂԻԱԶԱՐ ՄՈՒՐԱՏԵԱՆԻ




Ազգ. Պատմութեան մէկ կարեւոր կէտը լուսարանող խիստ շահեկան պարունակութեամբ սոյն դիրքը. 199 8<sup>o</sup> էջերով որ լոյս տեսած է Հայկական «Արաք» Տպարանէն կը ծախուի թրղթատարի ծախքով 2 1/2 Ֆր. Ի:

Գնել փափագողք կրնան դիմել հետեւեալ հասցէին.

Imprimerie Arménienne L'«Arax»

ALEXANDRIE

EGYPTE



# SALAMANDER

## ՍԱԼԱՄԱՆՏԵՐ

Ապահովագրական Ընկերութիւն  
ընդդէմ հրդեհի.

ԱՄՍԹԵՐՏԱՄ

Դրամագումար 3,125,000 ֆրանկ

Ամեն կերպ Ապահովագրութիւնք կ'ընդունուին ընդդէմ հրդեհի ինչպէս նաև Մովային, Կետային և Յամաքային վախագրութեանց արկածներու դէմ.

Դիւրամատչելի դներ և պայմաններ

Գիւնը առ Ընդհանուր Գործակալ և Լիազօր-Փոխանորդ

ՄԻՀՐԱՆ ԳԱԼՅԱՆՍ

Աղեփասնորիս, պզտիկ Մեհշիէ Ապուսաւրսա փողոց թիւ 10

# ԴԵՂԱՐԱՆ

## ԱՓՐԻԿԵԱՆ

PHARMACIE D'AFRIQUE

Սոյն միամեայ հաստատութիւնը վերջերս աւելի ճոխացուցած ենք բերել տալով եւրոպական ամեն տեսակ ընտիր դեղօրայք, սրեխաղիքներ եւ հանքային թարմ շուրեր:

Յաճախորդները կրնան ապահով ըլլալ դեղերուն խնամեալ եւ արագ պատրաստութեան ու գիներու չափաւորութեան մասին:

Գեղարանս կը յաճախեն Հայ եւ օտար բարեհամբաւ բժիշկներ ինչպէս նաև հանրութեան ծանօթ վկայեալ ու փորձ մանկաբարձներ:

## ԳԻՈՐԳ ԹՕԳԱԹԵԱՆ

ԿԱՆԵՂԻՆԱՅ ՅԱՐԴԱՌԻՉ (Tapissier)

Բազաքիս երևելի հայ տուներուն ծանօթ յաճախորդ, կը պատրաստէ

# L'ALLIANCE

## Լ'ԱԼԻԱՆՍ

Մովային Ապահովագրական Ընկերութիւն.

ՊԵՐԼԻՆ

Դրամագումար 5,000,000 ֆրանկ

Գոհացուցիչ պայմաններով ամեն տեսակ կահեղէններ, վարագոյր, ևն:

Յանձնարարութիւնք խնամով կը կատարուին:

Գիւնել Հայկ. Մեծ Սրճարանը:

## ԿԱԹՆԱՏՈՒՆ - ՃԱՇԱՐԱՆ

ՆՈՐ ԴԱՐ

Այս նոր բացուած ճաշարանին առաւելութիւններն են. ծովեզերեայ օդ, ամենամաքուր սպաս, և խնամեալ սպասարկութիւն, — ինչ որ կը փնտռուի յաճախ ուրիշ ճաշարանայ մէջ: —

Կերակուրները պոլսական ճաշակով պատրաստուած, իրենց համեղ ու այլազան հանգամանքներով արժանի են ամենապահանջկոտ քիմքերու գնահատման:

Գիւնեցէ՛ք նոր Դարի ճաշարանը, Ապու Չատրը փողոցին մէջ, Ղազարեան Եղբարց Վաճառատան գիմնաց. գիւնեցէ՛ք, ճաշակեցէ՛ք աւ տեսէ՛ք: